



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 29 ԱՊՐԻԼ, 2024

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ Ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ԿԻՍ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԻՆ ՊԱՐԳԵՒԱԾ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆԸ

Շնորիք ըրէ ինձի՝ քու ծառայիդ, որպէսզի ապրիմ եւ խօսքերդ գործադրեմ: Բաց աչքերս, որպէսզի տեսնեմ Օրէնքիդ հրաշալիքներդ: Ես պանդուխտ եմ երկրի վրայ, պապուէրներդ մի ծածկեր ինձմէ: Միրքս կ'այրի տեսաբար օրէնքներուդ ըղձալով: Դուն կը սաստես անիծեալ ամբարտաւաններդ, որոնք շեղած են պապուէրներէդ: Ինձմէ հեռու պահէ անոնց նախապիւնքն ու արհամարհանքը, որովհետեւ ես պապուիրաններդ կը գործադրեմ: Թէպէտ իշխողները ինձի դէմ դաւ կը նիւթեն ու կը չարախօսեն, բայց ես՝ քու ծառայ՝ կանոններուդ մասին կը խորհիմ: Արդարեւ պապուիրաններդ են իմ բերկրանքս, անոնք են իմ խորհրդականներս:

ՇԱՐԱԿԱՆ

Ի քեզ նայիմք, լո՛յսդ անմատոյց Ի զգայական ծածկեալ լուսոյ.
Որ վասն մեր եղար ի գրի, Եւ նընջեցեր ի տապանի՝
Առ մեզ ննջեա՛, արթո՛ւն բնութիւն, Հերքեա՛ զչարին ներգործութիւն.
Չի ի տուրնջեան և գիշերի Տացուք քեզ փառս անլռելի:
Էիդ լուսոյ անըստուերի Պաղատանօք կամք առաջի.
Որ փակեալ դրամբք յերեկոյին՝ Երեւեցար մետասանին.
Ընդ Թովմայի առ քեզ գոչեմք՝ Տէր եւ Աստուած զքեզ դաւանեմք.
Էջ եւ առ մեզ յերեկոյիս՝ Եւ տո՛ւր զողջոյն քո ի հոգիս:
Բամեալքս ըզքեզ, Տէր, աղաչեմք՝ Մեզ յօգնութիւն նայեա՛, հայցեմք,
Պահապանդ Իսրայէլի՝ Անձանց մերոց լե՛ր հովանի.
Օթեա՛ առ մեզ, խաղաղարար, Չի ննջեսցուք անխոռվարար.
Չի ընդ առաւօտըս կանխեսցուք Օրհնել զքեզ ընդ Հօր հոգւով:

ԱՊՈԹՔ

Տէր Աստուած գթութեան, փրկութեան եւ ողորմութեան, քարութեան եւ նորոգութեան, բժշկութեան եւ առողջութեան, լուսաւորութեան եւ կենդանոտեան, բարութեան եւ անմահութեան, յիշէ մեզ երբ գաս քու թագաւորութեամբդ: Քեզի կը պաղապիւնք՝ քեզի խաչակից եղողին հետ, յաւիտեանս. ամէն:

ՇԱՐՄԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յարեար ի մեռելոց, ողորմեա մեզ: (X 3)

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց:

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա՛:

ՇԱՐՄԱՆ-ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՍԱՂՄՈՍ 61

ՏԱՐԱԳԻՐ ՄԱՐԴՈՒՆ ԱՂՈԹՔԸ

Լսէ հեծեճանքս, ով Աստուած,

մփիկ ըրէ աղօթքս:

Տունէս հեռու եւ յուսահար՝ օգնութեանդ կը դիմեմ.

դուն զիս կրնաս առաջնորդել փրկութեան ժայռին,

որուն հասնիլը ոյժերես վեր է:

Արդարեւ իմ ապաւենս ես դուն,

թշնամիին դէմ իմ հզօր աշտարակս:

Պիտի ուզէի յաւիտենապէս քու յարկիդ փակ բնակիլ,

եւ թելերուդ հովանիին ապաւինիլ:

Դուն լսեցիր իմ աղօթքս, ով Աստուած,

եւ ինձի փութիւնս այն ժառանգութիւնը

ըր կը վերապահես քեզմէ ակնածողներուն:

Երկար կեանք փութ թագաւորին,

երկար փարիներ՝ սերունդէ սերունդ:

Թող յաւէր գահակալէ Աստուծոյդ ներկայութեան,

քու սէրդ եւ հաւաքարմութիւնդ միշտ պահապան ըլլան իրեն:

Ես նուագով անդադար քեզ պիտի ներբողեմ,

եւ օրը օրին իմ ուխտերս պիտի կատարեմ, ով Աստուած:

Պահապան ամենայնի Քրիստոս,

աջ էն հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,

ի նստիլ ի տան, ի գնալ ի ցանապարհ,

ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.

եւ ողորմեա՛ էն արարածոց եւ ինձ բազմամեղիս:



ՏԱՐԱԳԻՐ ՍԱՐԴՈՒՆ ԱՂՕԹՔԸ

Դաւիթ սրբբաց ու անկեղծ կը դիմէ Աստուծոյ եւ կը խնդրէ որ Աստուած մտիկ ընէ աղօթքը: Երբ կը դիմէ, բայց յարակ իր մտիկ մէջ ունի, որ լսեց եւ խնդրանքը փութաւ: Այս փողերը յիշեցում են նաեւ մեզմէ իւրաքանչիւրին, որ մենք ալ երբ ծանր վիճակներու մէջ կ'անցնինք եւ անել կացութեան մէջ ենք, ինչ կրնանք ընել, եթէ ոչ Դաւիթի նման դիմելու Աստուծոյ, սակայն դիմենք վստահութեամբ, որ Աստուած ոչ թէ միայն պիտի լսէ, այլ նաեւ պիտի պատասխանէ: Երբ հաւաքքով կը դիմենք ու կը հայցենք Աստուծոյ կամքը, որ իր ժամանակին պիտի կատարուի:

Երբ Դաւիթ կ'ըսէ. «Լսէ հեծե՛ծանքս, մտիկ ըրէ աղօթքս» ոչ թէ որովհետեւ հաւաքքը պակսեր է, այլ՝ ընդհակառակը կ'ուզէ ապահինիլ Աստուծոյ եւ ոչ թէ իր ոյժերուն: Այս Սաղմոսը նաեւ օրինակ է, որ մենք ալ դիմենք Աստուծոյ, եւ Աստուած պատրաստ է լսելու: Երբ ծանր վիճակներու մէջ ենք, Աստուած կը սպասէ որ մենք Իրեն դիմենք: Դաւիթ երբ կը դիմէ, կը դիմէ ամենայն վստահութեամբ որ Աստուած ոչ թէ պիտի լսէ, այլ արդէն լսեր ու պատասխանէր է: Նոյն այս հաւաքքով դիմելու Աստուծոյ:

Դաւիթ կը ներկայացնէ իր վիճակը, որ կը գրնուի Տունէն հեռու եւ յուսահատ, կը դիմէ Աստուծոյ օգնութեան համար: Եւ քննէք այնպիսի վստահութեամբ կը դիմէ, ըսելով. «Դուն զիս կրնաս առաջնորդել փրկութեան ժայռին», փրկութեան ժայռը, Քրիստոս ժայռը, եւ նոյն այն ժայռը, որ ամբողջ 40 փարիներու ընթացքին իրենց փութաւ այն ջուրը, որուն համար կ'ըսէ Պօղոս Առաքեալ Կորնթացիներուն ուղղուած նամակին մէջ: Այն ժայռը, որուն կ'անդրադառնայ Քրիստոս ըսելով. «Ով որ կը լսէ իմ այս խօսքերս եւ կը գործադրէ, կը նմանի այն մարդուն որ իր փունը ժայռի վրայ կը հիմնէ, երբ ալիքները գառնուին, հովերը փչեն, այդ փունը կանգուն կը մնայ»: Ահա Դաւիթ իր այս ծանր վիճակին մէջ, կ'ուզէ հենիլ փրկութեան ժայռին: Դաւիթ նաեւ կը խոստովանի, որ ինք ի վիճակի մէջ չէ եւ իր ոյժերէն վեր է այդ փրկութեան հասնիլը, ուրեմն Աստուծոյ կը դիմէ եւ Աստուծմէ կը խնդրէ որ զինք առաջնորդէ դէպի այդ փրկութեան ժայռը:

3րդ համարով Դաւիթ շնորհակալութիւն կը յայտնէ Աստուծոյ, որ իր ապաւենն ու հզօր աշտարակն է թշնամիին դէմ: Ահա յիշեցում նաեւ մեզի այսօր, մեզ համար ալ Աստուած մեր ապաւենն ու հզօր աշտարակն է: Ամենաձանր վիճակին մէջ իսկ ունի՞նք այս հաւաքքն ու վստահութիւնը:

4րդ համար, Դաւիթ փափաք մըն է որ կը յայտնէ, «Յաւիտենապէս քու յարկիդ փակ բնակիլ եւ թեւերուդ հովանիին ապահինիլ»: Դաւիթ իր աստանդական ու թափարական վիճակին մէջ, ու մանաւանդ փունէն հեռու յուսահատ, պէտք էր որ փափաքեր փուն երթայ, եւ ատի իր թագաւորական գահին բազմեր, բայց այդ չէր իր փափաքը, այլ՝ Աստուծոյ ներկայութեան ըլլալ: 27 Սաղմոսին 4րդ համարին մէջ Դաւիթ կ'արտայայտուի ըսելով. «Մէկ բան խնդրեցի Տիրոջմէն, եւ սա է խնդրանքս, որ կեանքիս բոլոր օրերուն մէջ Քու փանդ մէջ բնակիմ»: Նոյն փափաքը Պօղոս Առաքեալ ունի երբ կ'ըսէ. «Միակ փափաքս է Քրիստոսի հետ ըլլալ»: Այսօր, բոլորս մէկէ ատի փափաքներ ունինք: Եթէ ուզենք գրել շարքը երկար է, բայց ունի՞նք Դաւիթի կամ Պօղոս Առաքեալի նման փափաքը: Եթէ ունինք, ամուր փռնենք, եթէ ոչ այսօր այդ փափաքը ունենալու խնդրանքը ներկայացնենք: Ահա թէ ինչու Քրիստոս աշխարհ եկաւ մարմնացաւ, մարդացաւ եւ խաչի մահուամբ յանձն առաւ մահը, որպէսզի իրականացնէ այդ փափաքը, յաւիտենապէս ապրելու Աստուծոյ ներկայութեան: Առիթով մը Քրիստոս պիտի ըսէր Նիկողէմոսին. «Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր միածին Որդին փութաւ, որպէսզի ով որ հաւաքայ անոր չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ»: Ուրեմն, կարելի է՞ յաւիտենապէս Աստուծոյ յարկին փակ ապրիլ: Այո, կարելի է, Քրիստոսով ամէն ինչ կարելի է, եւ Քրիստոս կարելի դարձուց, պայմանաւ, ով որ Անոր հաւաքայ:

Աստուած ճշմարիտ ու հաւաքարիմ է, որ կը նշանակէ, ինչ որ խոստանայ կը կատարէ: Ահա Դաւիթ ցոյց կու տայ իր իսկ կեանքի օրինակով, ըսելով. «Դուն լսեցիր իմ աղօթքս, եւ ինձի փութաւ այն ժառանգութիւնը որ կը վերապահես քեզմէ ակնածողներուն»: Ուրեմն, ինչ որ Աստուած խոստացեր է, կը կատարէ: Փրկութիւն խոստացեր է, ուրեմն կը փրկէ, մեղքերու քաւութիւն եւ թողութիւն, ուրեմն կը քաւէ եւ թողութիւն կը շնորհէ, յաւիտենական կեանք, ուրեմն յաւիտենական կեանք կը պարգևէ: Ահա այս հաւաքարմութեան համար փառք փալու Աստուծոյ եւ Անոր սուրբ անունը փառաւորելու:

Ներաքրքրական է, որ 6րդ համարին մէջ Դաւիթ կը խնդրէ, որ Աստուած երկար կեանք տայ թագաւորին, երկար փարիներ՝ սերունդէ սերունդ: Ընդհանրապէս, մեր մարդկային դրուածքին մէջ միշտ կը փափաքինք երկար կեանք ունենալու: Տակաւին, յարուկ առիթներու ալ կը մտադրենք մեր նմաններուն երկար կեանք: Ծննդեան, փարեղարձի առիթով, կամ այլ ուրիշ առիթներու երկար եւ

առողջ կեանք: Այսպեղ Դաւիթի խնդրանքը այդ էր: Պարգապէս երկար կեանք ունենալ: Եւ խօսքը որու համար է արդեօք: Նախ ըսենք, որ Աստուածաշունչ Մատեանի Հին Կրակարանի էջերը կը ներկայացնեն դէպքեր, ուր Աստուածային օրհնութեամբ երկար կեանք ապրելու օրինակները: Այսօր ալ կը հանդիպինք մարդոց որոնք երկար կեանք ապրած են, ու փակաւին կ'ապրին: Դաւիթի խնդրանքը երկար կեանք ունենալու փարիներու թիւին մէջ չէ, այլ՝ այն փրուած խոստումին որ կ'ապրուած այն թագաւորին որ պիտի գար իր իսկ Դաւիթի շառաւիղէն, այսինքն՝ խօսքը կը վերաբերի նոյնինքն Յիսուս Քրիստոսի, որուն թագաւորութիւնը սերունդէ սերունդ:

Դաւիթ օրհնութեան ու փառաբանանքի երգեր պիտի ներբողէ Աստուծոյ Իր սիրոյն եւ հաւա- փարմութեան համար: Տեսէք, Դաւիթ իր ունեցած ու կրած նեղութիւններուն մէջ, նաեւ կը յիշէ Աստուծոյ փրուած խոստումը, եւ այդ խոստումին կ'ապարտումը, որուն համար ալ շնորհակալութիւն կը յայտնէ, ու Աստուծոյ անունը կը ներբողէ Անոր հաւաքարմութեան համար: Ահա այդ խոստումը կը կարդանք Ա Մնացորդաց 17:11-12 եւ 22:10 գլուխներուն մէջ. «Երբ քու օրերդ լեցուին, այսինքն՝ այս աշխարհէն մեկնումի պահդ գայ, եւ քու հայրերոդ խառնուիս, այսինքն՝ թաղուիս, քեզմէ ետք քու սերունդդ, քու սերունդէդ մէկը պիտի բարձրացնեն ու անոր թագաւորութիւնը պիտի հաստատեն: Անկա ինծի փուն մը պիտի շինէ ու անոր աթոռը յաւիտեան պիտի հաստատեն. ես անոր հայր պիտի ըլլամ, ու անկա ինծի որդի պիտի ըլլայ, ու իմ ողորմութիւնս անկ պիտի չվերցնեն, ինչպէս քեզմէ առաջ եղողէն վերցուցի: Զանկա յաւիտեան իմ փանս մէջ ու իմ թագաւորութեանս մէջ պիտի հաստատեն ու անոր աթոռը յաւիտեան հաստատ պիտի ըլլայ»: Ահա Դաւիթին փրուած խոստումը, որուն կ'ապարտումը պիտի ըլլար Յիսուս Քրիստոսով: Յիսուս Քրիստոս Դաւիթի շառաւիղէն իբրեւ մարդ, պիտի գար հաստատելու Աստուծոյ թագաւորութիւնը, եւ շինելու համար Աստուծոյ փունը: Այն փունը որ մարդկային ձեռքով շինուած պիտի չըլլար, այլ՝ անձեռագործ, որովհետեւ Աստուած անձեռագործ փաճարներու մէջ կը բնակի: Ահա Աստուածորդին՝ մեր Տէրն ու Փրկիչ Յիսուս Քրիստոս, Իր մահուամբ, ու մանաւանդ՝ յարութեամբ, մեր այս մարմինները իբրեւ փաճարներ պիտի մաքրագործէ, որպէսզի Աստուծոյ համար բնակութեան վայր ըլլայ: Պօղոս Առաքեալ այնքան պարզ ու մէկին պիտի ներկայացնէ ըսելով. «Միթէ չէք գիտեր, որ ձեր մարմինները փաճար են Աստուծոյ, որ Քրիստոս գնեց Իր իսկ արեան գնով»:

Ուրեմն, զգուշ ըլլանք Աստուծոյ փաճարը ըստ այնմ պահելու, եւ Դաւիթի նման ու Դաւիթի հետ անդադար ներբողելու Աստուծոյ սուրբ անունը եւ օրը օրին մեր ուխտը կ'ապարտելու: